ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.09.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/146

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ.Անանիկյանի

Պատվիրատու՝ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ
Մասնակից՝ «Արխիտեկտ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՌՑ-ԳՀԾՁԲ-19/17» ծածկագրով գնանշման հարցում, շենքերի, շինությունների և տանիքների վերանորոգման նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 09.09.2019թ. թիվ 26/26-1/14893-2019 գրությամբ «Արխիտեկտ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի 28.08.2019թ. թիվ 31-538 և 04.09.2019թ. թիվ 31-557 գրությունների հիման վրա, 09.09.2019թ. «Արխիտեկտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 09.09.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 18.09.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 18.09.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 26.09.2019թ.-ին:

2. «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի <u>ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն 28.08.2019թ. թիվ 31-538 և 04.09.2019թ. թիվ 31-557 գրություններով դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի և «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ-ի 13.06.2019թ. կնքած թիվ ՀՀՌՑ-ԳՀԾՁԲ-19/17-1 ծառայության ձեռք բերման պայմանագրի /այսուհետ Պայմանագիր/ շրջանակում մասնակիցը խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորություն:. Պայմանագրով սահմանված ժամկետում ծառայությունը չի մատուցվել, որը հանգեցրել է ՀՀ ՌՑ-ի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Խնդրում եմ ձեր որոշումը՝ «Արխիտեկտ» ՍՊԸ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:»:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ

կետը, ներկայացրել են թիվ «ՀՀՌՑ-ԳՀԾՁԲ-19/17» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Արխիտեկտ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. <u>«Արխիտեկտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 11.09.2019թ. գրությամբ դիմել է «Արխիտեկտ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.09.2019թ. թիվ 26/26-1/14893-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև նիստերին:

4. <u>ՍՑ-LO-2019/146 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Արխիտեկտ» ՍՊԸ-ի միջև 13.06.2019թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ՌՑ-ԳՀԾՁԲ-19/17-1» ծածկագրերով ծառայության մատուցման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ պետք է մատուցվեր շենքերի, շինությունների և տանիքների վերանորոգման նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակման, ծախսերի գնահատման ծառայություններ, մատուցումն պետք է իրականացվեր պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում:

www.gnumner.am համացանցային կայքում 29.08.2019թ. հրապարակված թիվ «ՀՀՌՑ-ԳՀԾՁԲ-19/17-1» պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի և «Արխիտեկտ» ՍՊԸ-ի

միջև ՀՀ ՌՑ ՓԲԸ-ի կարիքների համար շենքերի, շինությունների և տանիքների վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերում 2019 թվականի հունիսի 13-ին կնքված թիվ «ՀՀ ՌՑ-ԳՀԾՁԲ-19/17-1» ծածկագրով «Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման» պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ժամկետում և Պայմանագրի 1.1 կետով սահմանված կարգով՝ «Արխիտեկտ» ՍՊԸ-ն պարտավոր էր մինչև 2019 թվականի հուլիսի 03-ը կատարեր ստանձնած պարտավորությունները, սակայն մինչև նշված ժամկետը չի մատուցել հավելված 1-ով սահմանված ծառայությունները: «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն 2019 թվականի հուլիսի 13-ի թիվ /18-1/46859-2019 գրությամբ նախազգուշացրել էր «Արխիտեկտ» ՍՊԸ-ին, որպեսզի Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարվեն, այլապես միակողմանի կլուծվի «Արխիտեկտ» ՍՊԸ-ի հետ կնքված Պայմանագիրը:

Պայմանագրով սահմանված ժամկետում Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված ծառայությունները կազմակերպության կողմից չեն մատուցվել:

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի և «Արխիտեկտ» ՍՊԸ-ի միջև 13.06.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ ՌՑ-ԳՀԾՁԲ-19/17-1» ծածկագրով պայմանագիրը «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից 28.08.2019թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.3 ենթակետի ուժով (խախտվել է ծառայության մատուցման ժամկետը):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.09.2019թ. թիվ 26/26-1/14893-2019 գրությամբ «Արխիտեկտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ

անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կարիքների համար վերանորոգման նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման պարտավորությունը համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1

հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Ծառայությունը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին կամ խախտվել է Ծառայության կատարման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Արխիտեկտ» ՍՊԸ-ի կողմից

դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանիորեն լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում 29.08.2019թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Արխիտեկտ» ՍՊԸ-ն, խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.09.2019թ. թիվ 26/26-1/14893-2019 գրությամբ «Արխիտեկտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Արխիտեկտ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**